

## ԽՕՍՔ

**ԳԻՒՏ ԱՐՔԵՊՈ. ՆԱԳԳԱՇԵԱՆԻ՝**

**ԿԱՐԴԱՑՈՒԱԾ ՍՈՒՐԲ ՅՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏԻՉ**

**ՄԱՅՐ ՏԱԺԱՐԻՆ ՄԵԶ**

**ԶՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿ ՕԶԱՆԵԱՆԻ ԱԺԻՒՆԻՆ**

**ԱՌՋԵ, ԱՆՈՐ ՀԱՅՐԵՆԻՔ ՓՈԽԱԴՐՈՒԹԵԱՆ**

**ԱՌԹԻՒ ԿԱՏԱՐՈՒԱԾ ՀՈԳԵՀԱՆԳԻՍԻ**

**ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆ ԸՆԹԱՑՔԻՆ**

(Փարիզ, 15 փետրուար, 2000 թ.)

Սիրելի Զօրավար.

Քահանայք եւ ժողովուրդը վերստին Ձեր շուրջն են այստեղ, այս Մայր Տաճարին մէջ, ուր դէպի հայրեմեաց երկիր, դէպի հայրեմի հող՝ հայրեմի տուն Ձեր ուղեւորութեան ճանապարհին կանգ առիք ասկէ 72 տարիներ առաջ:

Այսօր Ձեր ուղեգանցութեան վերջին հանգրուանն է: Համայն ազգն Հայոց կողքումէ Ձեզ Վարդանանց ճակատամարտի յիշատակով. զօրականը եւ ժողովուրդը իրենց առաջնորդին շուրջ համախմբուած՝ հսկումով կ'աղօթեն հաղորդուելու և վերանորոգուելու իրենց Հերոսին շունչով՝ վասն հաւատոյ և վասն հայրենեաց:

Այս վերանորոգ ապրումով նորէն կը տեսնեմք Ձեզ «իբրև արծիւ սաւառում էք լեռ ու ժայռ, թնդացնում էք երկինք, երկիր տենչավառ» եւ հաւատքով կ'աղօթէք՝ «Տէր, կեցն՝ դու զշայս եւ արա՛ զնոսա պայծառ, Զազգ մեր համայն փրկեա՛ ի թշնամնաց» եւ վերջապէս կը հայցէք «Զողորմութիւնդ վերին հաճեա՛ ձօմեկ մոցին»:

Հայրենասիրութեան բացարձակ հաւատքը եւ ազգին ու Եկեղեցւոյ ծառայութեան ուխտող որպէս «հաւատամբ» մեր կենաքին, կը փոխանցէիք մեզի:

Սիրելի Զօրավար, «Ազնի՛ ծառայ, բարի և հաւատարիմ, մ'ստ յուրախութիւն Տեառն քո», յարգանքով կը խոնարիննք քու վաստակիդ առջեւ և կը հաւատիացնեմք Ձեզ, թէ «Հայոց կուսանք դասինեայ պսակ կը հիւսեն» եւ «Քեզ երանեն ամենալն ազինք»:

Սիրելի հարազատներ.

Վասն հայրենեաց և վասն հաւատոյ ծառայելու աւանդն է, որ կը ստանանք Զօրավարէն որպէս «ժառանգ». զայն ապրելով՝ յախտնմական իր բնակարանին մէջ պարտինք ուրախացնել զինք՝ անվերապահօրէն հետեւելով իրեն, որպէս զի օր մը պատմիչը չգորիանայ միայն արձանագրելէ «Յիշատակն արդարոց օրինութեամբ եղիցի» ինքնագործութեան խարկանքը:

Սիրելի Բայրենակիցներ,  
Եկէր ձայնակցինք Երշամկայիշատակ Եղիշէ Պատրիարքին, որ իրապէս  
ամենու զգացումները կը բանաձեռ, երբ կուտ.

«Եւ դեռ Կ'ուզեմ՝  
Հազարաւոր հերոսներու  
Արիստ արդար, իբրև մելան,  
Գրելու երգն լիշտակի՛ն՝  
Մահուամք մահը կոխողին,  
Սիրտը որում՝  
Տրոփելէն դեռ չէ դադրած  
Կուրծքներուն տակ մեր բոլորին»:

### Ու տակաւիմ՝

«Ալիքներուն մէջէն աճոնց,  
Կրակ թեւով կը սաւառի,  
Մինչեւ այսօր,  
Գրոհներու խորհրդանիշ,  
Մեր դարերու անմար ողին,  
Հայելիին մէջ անցեալի՛ն՝  
Կ'արտացոյալ  
Բանակն ահա Աւարայրի,  
Զիոն վրայ իր սպիտակ,  
Ու դաշտերը Բայրենիքին,  
Տրոփելէն կը սարսուան  
Երկաթազէն ու կատաղի,  
Խշած ծունդի՝  
Խարովկին շուրջ, որ կը Վասի  
Զերք Մորենին,  
Ուկրաներէն հերոսներուն  
Ու Սուրբերուն,  
Պաշտամունքի լաւերժական  
Հայրենիքին»:

Բարի ճանապարհ Քեզ, յափեան երախտաւոր, աննման Զօրավար:

